

## Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

2017-2018թթ <<Քաղաքացիական իրավունք>> առարկայի պետական քննության

1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը: Քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների հասկացությունը, տեսակները և առանձնահատկությունները:
2. Ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը և հատկանիշները:
3. Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը:
4. Քաղաքացիական օրենսդրության և այլ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա: Իրավունքի և օրենքի անալոգիան քաղաքացիական իրավունքում:
5. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը, դասակարգումը և սուբյեկտային կազմը: Իրավասուբյեկտություն:
6. Քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացման հիմքերի հասկացությունը: Իրավաբանական փաստեր և իրավաբանական կազմ:
7. Քաղաքացիական իրավունքների իրականացման հիմնական սկզբունքները և սահմանները: Իրավունքի սահմանանցման և իրավունքի չարաշահման հասկացությունը և իրավական հետևանքները:
8. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերը և եղանակները:
9. Քաղաքացիական իրավունակության հասկացությունը: Իրավունակության և սուբյեկտիվ իրավունքի հարաբերակցությունը:
10. Լրիվ գործունակության հասկացությունը և ծագման հիմքերը: Ազատագրման (եմանսիպացիայի) հասկացությունը, հիմքերը, կարգն ու նշանակությունը:
11. Մինչև 14 տարեկան և 14-18 տարեկան անչափահասների գործունակությունը:
12. Քաղաքացու գործունակության սահմանափակման հասկացությունը, հիմքերը, կարգն ու հետևանքները:
13. Քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերը, կարգն ու հետևանքները:
14. Խնամակալության և հոգաբարձության հասկացությունը և նշանակման հիմքերը: Խնամարկյալների շրջանակը:
15. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու նշանակությունը, կարգը, պայմանները և հետևանքները: Քաղաքացուն մահացած հայտարարելու նշանակությունը, կարգը, պայմանները և հետևանքները:
16. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները: Իրավաբանական անձի իրավունակության առանձնահատկությունները: Իրավաբանական անձի գործունակության առանձնահատկությունները: Իրավաբանական անձի մարմինները:
17. Իրավաբանական անձի ստեղծման կարգը: Հիմնադիր փաստաթղթերի հասկացությունը, նշանակությունը, ձևը և բովանդակությունը:
18. Իրավաբանական անձի վերակազմակերպման տեսակները և դրանց ընդհանուր բնութագիրը:
19. Իրավաբանական անձի լուծարման հասկացությունը և հիմքերը: Լուծարային հանձնաժողովի նշանակման կարգը և իրավասությունները: Պարտատերերի պահանջների բավարարման կարգն ու հերթականությունը:
20. Առևտրային իրավաբանական անձանց հասկացությունը և իրավական կարգավիճակը:

21. Ոչ առևտրային իրավաբանական անձանց հասկացությունը և իրավական կարգավիճակը:
22. Տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների հասկացությունը և առանձնահատկությունները:
23. Լիակատար և վստահության վրա հիմնված ընկերակցությունների էությունը:
24. Մահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների հասկացությունն ու առանձնահատկությունները:
25. Բաժնետիրական ընկերության հասկացությունը, առանձնահատկությունները և տեսակները:
26. Կախյալ և դուստր ընկերությունների հասկացությունը և կարգավիճակը: Իրավաբանական անձանց հիմնարկները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:
27. Հասարակական միավորումները և հիմնադրամները որպես իրավաբանական անձեր:
28. Պետության, համայնքների և մարզերի իրավունակությունն ու քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության ձևերը:
29. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության:
30. Իրերի հասկացությունը, դասակարգումը և դրա իրավական նշանակությունը:
31. Դրամական միջոցները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Արժույթային արժեքների քաղաքացիական ռեժիմի առանձնահատկությունները:
32. Արժեթղթերի հասկացությունը, տեսակները ու դրանց ընդհանուր բնութագիրը:
33. Տեղեկատվությունը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Առևտրային գաղտնիքի իրավական պահպանությունը: Անձնական ոչ գույքային բարիքները, աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ:
34. Գործարքների հասկացությունը, հատկանիշներն ու նշանակությունը: Գործարքների տեսակները:
35. Գործարքի ձևը: Բանավոր ձևով կնքվող գործարքներ: Գրավոր ձևով կնքվող գործարքները և ձևը չպահպանելու հետևանքները:
36. Անշարժ գույքի կապակցությամբ կնքվող գործարքներ: Գործարքից բխող իրավունքների պետական գրանցման նշանակությունը:
37. Գործարքի վավերության պայմանները:
38. Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները:
39. 14-18 տարեկան անչափահասի, սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու կամ իր գործողությունները ղեկավարելու անընդունակ քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը և դրա հետևանքները:
40. Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերությունը և դրա հետևանքները:
41. Խաբեության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնության կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքի անվավերությունը և դրա հետևանքները:
42. Իր իրավունակության սահմաններից դուրս եկած իրավաբանական անձի կնքած գործարքի, անձի՝ իր իրավատվությունների սահմանազանցմամբ կնքված գործարքի անվավերությունը և դրա հետևանքները:
43. Ներկայացուցչության հասկացությունը, հիմքերը և տեսակները:
44. Լիազորագրի հասկացությունը, տեսակները և ձևը:
45. Ժամկետների հասկացությունը և նշանակությունը քաղաքացիական իրավունքում: Ժամկետների դասակարգումը:

46. Հայցային վաղեմության ժամկետների հասկացությունը և նշանակությունը:
47. Հայցային վաղեմության ժամկետների տեսակները և կիրառման առանձնահատկությունները: Պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում:
48. Հայցային վաղեմության ժամկետների կասեցման և ընդհատման հասկացությունը, հիմքերը և պայմանները: Բաց թողնված հայցային ժամկետի վերականգնումը:
49. Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը:
50. Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը:
51. Վերամշակումը որպես սեփականության իրավունքի ձեռք բերման հիմք: Հանրամատչելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը:
52. Պտտուղների, եկամուտների և տիրագուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը: Պայմանագրով գույք ձեռք բերելը որպես սեփականության իրավունքի առաջացման հիմք:
53. Գտանքի, գանձի և առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը:
54. Ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը:
55. Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքով:
56. Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ:
57. Քաղաքացիների սեփականության իրավունքի առանձնահատկությունները:
58. Պետական սեփականության իրավունքի առանձնահատկությունները:
59. Իրավաբանական անձանց սեփականության իրավունքի առանձնահատկությունները:
60. Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը:
61. Ընդհանուր բաժնային սեփականության իրավունք:
62. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:
63. Սեփականության իրավունքի պաշտպանության հասկացությունը և եղանակները:
64. Վինդիկացիոն և ներգատոր հայցեր: Գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից վերադարձնելու ժամանակ կատարվող հաշվարկները:
65. Մահմանափակ իրային իրավունքները:
66. Մերվիտուտը որպես սահմանափակ իրային իրավունք:
67. Հողամասի կառուցապատման իրավունք:
68. Քաղաքացիաիրավական պարտավորության հասկացությունը, տեսակները (դասակարգումը) և ծագման հիմքերը:
69. Անձանց բազմաթիվությունը պարտավորության մեջ:
70. Բաժնային և համապարտ պարտավորությունների ընդհանուր բնութագիրը:
71. Պահանջի զիջումը և պարտքի փոխանցումը պարտավորությունում:
72. Քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը և դասակարգումը ըստ իրավական արժեքավորման:
73. Քաղաքացիաիրավական պայմանագրերի դասակարգումը ըստ մասնակիցների միջև իրավունքների և պարտականությունների բաշխման: Երրորդ անձի օգտին կնքված պայմանագիր:
74. Ազատորեն և պարտադիր կարգով կնքվող պայմանագրեր:
75. Քաղաքացիաիրավական պայմանագրի բովանդակությունը և ձևը:

76. Քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու կարգը: Պայմանագրի կնքումը սակարկություններով:
77. Պայմանագրի փոփոխման և լուծման հիմքերը, կարգը և հետևանքները:
78. Պարտավորությունների կատարման հասկացությունը և սկզբունքները:
79. Պարտավորությունների պատշաճ կատարման սուբյեկտները, պարտավորություն կատարման առարկան և որակը:
80. Պարտավորությունների կատարման վայրը և ժամկետը:
81. Տուժանքը որպես պարտավորության ապահովման միջոց: Տուժանքի տեսակները:
82. Գրավը և ապահովված իրավունքը որպես պարտավորության ապահովման միջոց: Գրավի տեսակները:
83. Գրավի ծագման հիմքերը: Գրավի պայմանագիրը և դրա ձևը: Գրավադրված գույքի իրացման կարգը:
84. Երաշխավորությունը որպես պարտավորության ապահովման միջոց:
85. Երաշխիքը որպես պարտավորության ապահովման միջոց:
86. Պահումը և կանխավճարը որպես պարտավորության ապահովման միջոց:
87. Քաղաքացիաիրավական պատասխանատվության հասկացությունը, նշանակությունը և պատասխանատվության տեսակները:
88. Հակաօրինական վարքագիծը և վնասը որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման:
89. Պատճառական կապը և մեղքը որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման:
90. Պատասխանատվությունից ազատելու պայմանները:
91. Պարտավորությունների կատարումը, պարտավորության նորացումը և հրաժարագինը որպես պարտավորության դադարման հիմք:
92. Հաշվանցը որպես պարտավորության դադարման հիմք:
93. Պարտապանի և պարտատիրոջ համընկնումը, պարտքի ներումը, քաղաքացու մահը և իրավաբանական անձի լուծարումը և պարտավորության կատարման անհնարինությունը որպես որպես պարտավորության դադարման հիմք:
94. Առուծախի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը: Վաճառողի և գնորդի իրավունքներն ու պարտականությունները: Պարտականությունները չկատարելու հետևանքները:
95. Գնորդի սեփականության իրավունքի ծագման պահը: Վաճառված գույքի պատահական կորստի ռիսկը:
96. Մանրածախ առուծախի պայմանագիր:
97. Անշարժ գույքի առուծախի առանձնահատկությունները:
98. Մատակարարման պայմանագրի հասկացությունն ու բովանդակությունը:
99. Էներգամատակարարման պայմանագիր:
100. Ռենտայի պայմանագրի հասկացությունը և տեսակները:
101. Նվիրատվության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը: Պայմանագրի տարրերը: Նվիրատվության խոստում:
102. Նվիրաբերում:
103. Վարձակալության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը: Ենթավարձակալություն:
104. Վարձույթի պայմանագիր:
105. Տրանսպորտային միջոցների վարձակալություն:

106. Շենքերի և շինությունների վարձակալություն:
107. Ֆինանսական վարձակալություն (լիզինգ):
108. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:  
Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի դադարումը:
109. Կապալի պայմանագրի հասկացությունը, տեսակները: Պայմանագրի կողմերը, առարկան, ձևը, ժամկետը և գինը:
110. Կապալի պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները:  
Պատասխանատվությունը կապալի պայմանագրի խախտման համար:
111. Կենցաղային կապալի պայմանագրի առանձնահատկությունները:
112. Շինարարական կապալի պայմանագրի հասկացությունը, նշանակությունը և տարրերը:
113. Ծառայությունների մատուցման պայմանագրի հասկացությունը և տարրերը: Պայմանագրի տեսակները:
114. Հանձնարարության պայմանագրի հասկացությունը, առանձնահատկությունները և տարրերը:
115. Կոմիսիայի պայմանագրի հասկացությունը, տեսակները և բովանդակությունը:
116. Գործակալման պայմանագրի հասկացությունը, բովանդակությունը և դադարման առանձնահատկությունները:
117. Պահատվության պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը:
118. Պատասխանատվությունը պահատվության պայմանագրով: Պահառուի պատասխանատվությունը:  
Պահատուի պատասխանատվությունը:
119. Պահեստային պահատվության պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները:  
Պահեստային փաստաթղթեր: Պահատվություն գրավատանը: Արժեքների պահատվությունը բանկում:
120. Պահատվությունը տրանսպորտային կազմակերպությունների պահասենյակներում, կազմակերպությունների հանդերձարաններում և հյուրանոցներում: Վեճի առարկա գույքի պահատվությունը (սեկվեստր):
121. Բեռների փոխադրման պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը:
122. Ուղևորի և ուղեբեռան փոխադրման պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը:
123. Տրանսպորտային առաքման պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը:
124. Փոխառության պայմանագրի հասկացությունը, տարրերը: Պայմանագրի բովանդակությունը:
125. Վարկային պայմանագիր հասկացությունը և տարրերը: Ապրանքային և առևտրային վարկ:
126. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր (ֆակտորինգ):
127. Բանկային ավանդի պայմանագրի հասկացությունը, տարրերը:
128. Բանկային հաշվի պայմանագիր հասկացությունը և տարրերը:
129. Հաշվարկների ընդհանուր բնութագիրը, հաշվարկների ձևերը: Կանխիկ և անկանխիկ հաշվարկներ:
130. Վճարման հանձնարարականներով հաշվարկներ:
131. Հաշվարկներ ակրեդիտիվով:
132. Ինկասո հաշվարկների հասկացությունը և առանձնահատկությունները:
133. Չեկով հաշվարկներ հասկացությունը և առանձնահատկությունները:
134. Ապահովագրության պայմանագիր հասկացությունը, տարրերը, պայմանագրի գործողությունը:  
Ապահովագրական հատուցում տալը մերժելը:

135. Ապահովագրության տեսակները և ձևերը:
136. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:  
Հավատարմագրային կառավարչի պատասխանատվությունը:
137. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի հասկացությունը, տարրերը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները:
138. Համատեղ գործունեության պայմանագիր հասկացությունը, պայմանագրի տարրերը, բովանդակությունը, մասնակիցների ընդհանուր գույքի իրավական ռեժիմը և ընդհանուր գործերը վարելը:
139. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների հասկացությունը և տեսակները:
140. Պարզ և վճարելու հրապարակային խոստումը: Պարզ և վճարելու հրապարակային խոստումը վերացնելը:
141. Հրապարակային մրցույթ կազմակերպելը: Մրցույթի պայմանները, դրանք փոփոխելը և վերացնելը: Պարզ և վճարելու մասին որոշումը:
142. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների պայմանները: Կատարված գործողություններին հավանություն տալը: Այդ գործողությունների համար վարձատրությունը:
143. Արտապայմանագրային պարտավորությունների հասկացությունը, դրանց տեսակները:
144. Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորությունների հասկացությունը: Վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը:
145. Վնասը պատճառողի և տուժողի մեղքը վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններում:
146. Իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունն իր աշխատողի պատճառած վնասի համար: Պատասխանատվությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատճառած վնասի համար: Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար:
147. Պատասխանատվությունը մինչև տասնչորս տարեկան անչափահասների պատճառած վնասի համար: Պատասխանատվությունը տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների պատճառած վնասի համար:
148. Պատասխանատվությունը անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասի համար: Պատասխանատվությունը սահմանափակ գործունակ քաղաքացու պատճառած վնասի համար:
149. Պատասխանատվությունը շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառած վնասի համար:
150. Անշարժ գույքով և կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցումը:
151. Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցումը:
152. Քաղաքացու առողջությանը պատճառված վնասը հատուցելը: Չափահաս տարիքի չհասած անձի առողջությանը պատճառված վնասը հատուցելը: Քաղաքացու կյանքին պատճառված վնասը հատուցելը: Կերակրողի մահվան հետևանքով անձանց կրած վնասի հատուցումը:
153. Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով և անբարեխիղճ գովազդով պատճառված վնասի հատուցումը:
154. Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորության հասկացությունը և բովանդակությունը:

155. Մտավոր սեփականության հասկացությունը: Մտավոր սեփականության օբյեկտները:
156. Հեղինակային իրավունք հասկացությունը: Հեղինակային իրավունքի օբյեկտները և դրանց տեսակները: Համահեղինակություն:
157. Հեղինակի անձնական և գույքային իրավունքները:
158. Հեղինակային պայմանագրեր: Հեղինակային պայմանագրերի պայմանները, ձևը, բովանդակությունը:
159. Հեղինակային հարակից իրավունքներ:
160. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը: Արտոնագիր: Դրա անհրաժեշտ վավերապայմանները, ստանալու կարգը, գործողության ժամկետը:
161. Ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և ապրանքի ծագման տեղանունը որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոց:
162. Ժառանգման հասկացությունը և նշանակությունը: Ժառանգության բացման ժամանակը և ժառանգության բացման վայրը: Ժառանգության զանգվածը: Գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները:
163. Կտակի հասկացությունը, ձևը, բովանդակությունը և տեսակները:
164. Ժառանգումն ըստ օրենքի: Ըստ օրենքի ժառանգների շրջանակը: Ժառանգումը ներկայացման իրավունքով: Անարժան ժառանգներ:
165. Ժառանգությունն ընդունելու կարգն ու եղանակները: Ժառանգությունից հրաժարվելը և դրա հետևանքները:
166. Ժառանգական գույքի բաժանումը, պահպանման և կառավարման կարգն ու միջոցները:

Ամբիոնի վարիչ

Վ.Ավետիսյան